ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. N --- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.8 ԵՎ ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/8 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի կողմից Պարույր Սևակի փողոցի հ.8 և Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեներում կառուցվող բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքերում առկա գույքային միավորների հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.8 ԵՎ ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/8 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Պարույր Սևակի փողոցի հ.8 և Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեներում կառուցվող բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքերում առկա 361 և 468 առանձին գույքային միավորների հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը 5000 ՀՀ դրամ սահմանելու խնդրանքով։

«ԵՊՀ շրջանավարտների միավորում» Հ/Կ-ը Հայաստանի Հանրապետության Նախագահ, ԵՊՀ շրջանավարտների միավորման հոգաբարձուների խորհրդի նախագահ պարոն Ս.Սարգսյանի բարձր հովանու ներքո, նախաձեռնել է «Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» և «Մատչելի բնակարան երիտասարդ լրագրողներին, մանկավարժներին, բժիշկներին և սպորտսմեններին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրերը, որոնց շրջանակում Երևան քաղաքի Պարույր Սևակի 8 և Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեներում կառուցվում են բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքային համալիր, որոնց բնակարանները շուկայականից անհամեմատ ցածր գներով տրամադրվելու են երիտասարդ գիտնականներին և ստեղծագործողներին, իսկ Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեում՝ երիտասարդ լրագրողներին, մանկավարժներին, բժիշկներին և սպորտսմեններին։

Պարույր Սևակի 8 հասցեում գտնվող բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքում առկա է 361 առանձին գույքային միավորներ (273 բնակարան, 82 ավտոկայանատեղեր, 6 հասարակական սպասարկման տարածքներ), իսկ Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեում՝ 468 առանձին գույքային միավորներ (338 բնակարան, 120 ավտոկայանատեղեր, 10 հասարակական սպասարկման տարածքներ)։

«Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» և «Մատչելի բնակարան երիտասարդ լրագրողներին, մանկավարժներին, բժիշկներին և սպորտսմեններին» ծրագրերն ունեն շահույթ չհետապնդող բացարձակ սոցիալական ուղղվածություն։

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու 06.05.2011թ. հ.224-Ն որոշումը, համաձայն որի Երևան համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանվել է 15000 ՀՀ դրամ, իսկ ՀՀ կառավրության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման 49-րդ կետի համաձայն հասցեի տրամադրման ծառայությունը վճարովի է՝ «Պարույր Սևակի փողոցի հ.8 և Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.8 ԵՎ ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/8 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պարույր Սևակի փողոցի հ.8 և Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.8 ԵՎ ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/8 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պարույր Սևակի փողոցի հ.8 և Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/8 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ